

Հայաստանի Հանրապետության կրթության և  
գիտության նախարարության  
<<Հ.62 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

Ք.Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության <<Հ.62 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի 2011-2015 ուսումնական տարվա հեռանկարային զարգացման զարգացման ծրագիր



*Դպրոցի բնութագիրը և առանձնահատկությունները*

1967թ. Երևան քաղաքի Նոր Նորք բարձունքում նորաստեղծ Սովետական շրջանի 106 դպրոցից առանձնանում է մի հանրակրթական նոր դպրոց՝ հ.62-ը:

Աշակերտների թիվը 1800: Դասարանները՝ հայկական և ռուսական:

Առաջին տնօրենն է եղել Կառլեն Բագրատի Մելիքսեթյանը:

1973թ. կառուցվում է հ.165 դպրոցը, որտեղ և տեղափոխվում են հայկական դասարանները: 1991թ. հ.62 դպրոցը փոխում է կարգավիճակը դառնալով ազգային հանրակրթական դպրոց՝ ռուսերենով խորացված ուսուցմամբ դասարաններով:

2003թ. հ.62 և 165 դպրոցները միաձուլվում են՝ դառնալով մի կատարյալ ամբողջություն և միաձուլման արդյունքում ունենում է 1855 աշակերտ: 2009թ.-ից գործում է որպես ավագ դպրոց՝ իր վերանորոգված մասնաշենքով:

Երբեմնի 1800 աշակերտ ունեցող դպրոցում այժմ սովորում է 888աշակերտ, որից 26-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ են: Այս թիվն օրեցօր աճում է Ռուսաստանի դաշնությունից վերադարձող աշակերտներ ընդունելու հաշվին: Իր 43-ամյա կենսագրության տարիներին կատարել է կրթադաստիարակչական ծառայություններ:

<<Հ.62 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ավագ դպրոցում հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ առևտրային կազմակերպություն է:

Դպրոցում կա կադրային մեծ պոտենցիալ և վերապատրաստված ուսուցիչների մեծ քանակ: Աշխատում են բարձրագույն մասնագիտական կրթությամբ 71 ուսուցիչ: Դպրոցում պահպանված են սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման պահանջները: Ճիշտ կազմակերպված ուսումնադաստիարակչական գործունեությունը կնպաստի հասարակության պահանջարկը բավարարող կիրք քաղաքացի նախապատրաստելուն: Կարևորն այն է, որ տեսադաշտից չկորցնենք բազմակողմանիորեն զարգացած անձնավորությունների ձևավորումը:

Ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում և իրականացվում է առարկայական մասնախմբերի միջոցով: Խնդիրները քննարկվում և որոշումները կայացվում են մանկավարժական խորհրդի նիստերում:

Դպրոցը կառավարում է 8 անձից բաղկացած կառավարման խորհուրդը: Խորհուրդը վերահսկողություն է իրականացնում տնօրինության ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարմանը և ժամանակին քննարկում է դպրոցի ֆինանսատնտեսական և տնօրենի կրթադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագիրը: Աշակերտական խորհուրդը դիտվում է՝ որպես դպրոցի կառավարման մարմին:

Գործադիր տնօրենին օգնում են ուսումնական և մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրենները, մանկապատանեական կոլեկտիվի կազմակերպիչը:

Հոսքային /խորացված/ ուսուցման օրինակելի ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական հոսքային դպրոցական բաղադրիչներից: Հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի /ենթահոսքի/ համար:

Ունի ռուսերենով խորացված ուսուցմամբ դասարաններ, որտեղ սովորում են ազգությամբ ռուս, եզդի աշակերտներ:

Սովորողների գիտելիքների և տարեկան ամփոփիչ ստուգումը և գնահատումը կատարվել են և կատարվում են դպրոցի տիպին համապատասխան չափորոշիչներով՝ 2008-2009 ուստարվանից աշակերտները գնահատվում են նոր համակարգով:

Դպրոցը պատասխանատվություն է կրում հանրակրթական պետական չափորոշիչների ծրագրերի, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալական հոգեբանական զարգացման առանձնահատկություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

Հաստատություն ընդունված սովորողների համար ուսման ընդհանուր տևողությունը սահմանվում է 3 տարի /ավագ դպրոցի՝ 10, 11, 12 դասարաններ/։ Հաստատությունում ուսուցումը նպատակաուղղված է նախամասնագիտական պատրաստվածությունն ապահովող գիտելիքների յուրացմանը։ Ամեն տարի ունենում ենք համայնքային, քաղաքային, հանրապետական օլիմպիադաներին մասնակցող և հաղթող աշակերտներ և տարեցտարի այդպիսի աշակերտների թիվն ավելանում է՝ ի շնորհիվ հաստատությունում աշխատող ուսուցիչների։

Հաստատությունում սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան իրականացվում է տարբերակված հոսքային մասնագիտացված կրթություն։

Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝ ապահովելով 34 ուսումնական շաբաթ։.

ա/ հումանիտար / իրավագիտական և լեզվագիտական/.

բ/բնագիտամաթեմատիկական /կենսաֆիզիկա և տնտեսագիտական/:

Հաստատությունում 10-րդ դասարանում ընդունելություն սկսվում է յուրաքանչյուր տարվա հուլիս-օգոստոս ամիսներին՝ սովորողների դիմումների հիման վրա։ Դպրոց կարող են ընդունվել հիմնական դպրոցն ավարտած շրջանավարտները։ Սովորողների ընդունելությունը իրականացվում է առանց սահմանափակումների։

Հաստատության աշակերտների բուժապասարկումը իրականացվում է առողջապահության մարմինների կողմից ամրակցված բուժանձնակազմի կողմից։

Հաստատության դասարանների միջին խտությունը սահմանվում է 20-25 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ /ընդ որում, սովորողների թիվն ավագ դպրոցում չի կարող գերեզանցել 30-ը/: Առանձին դեպքում ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության թույլատվությամբ՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ կամ հաստատության լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրի հաշվին՝ խորհրդի որոշմամբ:

Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին, աշխատում ենք հնգօրյա աշխատանքային ռեժիմով՝ ժամը 9<sup>00</sup>-ից: Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևը դասն է՝ 45 րոպե տևողությամբ:

Դպրոցում կիրառվում է սովորողների գիտելիքների կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատման կարգը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և իր դասացուցակի հիման վրա: Ուսումնական պլաններում առանձին առականերին հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի պետական տիպային ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:

Ավագ դպրոցում 1-ին և 2-րդ տարիներին հաստատությունը իրավունք ունի կազմակերպել տարեվերջյան փոխադրական քննություններ: Այն սովորողներին, որոնց առաջադիմությունը հոսքային առարկաներից ցածր է, հնարավորություն է տրվում տեղափոխվել և շարունակել ուսումը հաստատությունում գործող համապատասխան հոսքում:

Ծրագիրը նպատակաուղղված է լուծում տալու ավագ դպրոցի առջև ծառայած խնդիրներին և աջակցել ավագ դպրոցի բարեփոխումներին: Ավագ դպրոցի առաքելությունն է ապահովել սովորողների պատրաստվածությունը ինքնուրույն կյանք վարելու իրենց հակումներին, կարողություններին, նախասիրություններին համապատասխան նախնական միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը: Ավագ դպրոցը պետք է նպաստի սովորողի մասնագիտական կողմորոշմանը, ապահովի շրջանավարտի հետագա ուսումնական հաջողությունները, նախապատրաստի սովորողին ինքնուրույն կյանքի: Ավագ դպրոցը պետք է ապահովի նաև որոշակի նախամասնագիտական պատրաստվածությունը:

Առավել արդյունավետ է ստեղծել առանձին նյութատեխնիկական բազա մանկավարժական կադրերով, որտեղ կառաջարկվի կրթական ծրագրերի բազմազանություն:

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմելիս մենք առաջնորդվում ենք այն խնդիրներով, թե ինչպիսի բարեփոխումներ ենք ցանկանում իրականացնել և դպրոցի որ կառուցվածքային միավորումներին են դրանք վերաբերում: Այդ ամենը կախված է նրանից, թե << պահանջված ապագայի հեռանկարի>> ինչպիսի ուրվագիծ է մեր կողմից պատկերվելու:

Հեռանկարային զարգացման պլանը կազմված է հաշվի առնելով իրական հնարավորությունները, մանկավարժական հանրույթի իրական հետագա գործունեությունը, սովորողների համակազմը: Այն կատարվելու է տնօրենի ղեկավարությամբ և մանկավարժական հանրույթի ակտիվ մասնակցությամբ: Ճիշտ կազմակերպված ուսումնադաստիարակչական գործունեությունը կնպաստի

հասարակության պահանջները բավարարող կիրթ քաղաքացի նախապատրաստելուն: Բարեփոխումները գործելու են, հնարավոր է ամեն ինչ վաղօրոք պատկերել: Կարևորն այն է, որ տեսադաշտից չկորցնենք բազմակողմանիորեն զարգացած անձնավորությունների ձևավորումը: Հաստատության հեռանկարային պլանը ուսուցչական հանրույթի և տնօրինության մանկավարժական գործունեության կանխազգացումն է, որոշելով այն գլխավոր խնդիրը, որոնք անհրաժեշտ են լուծել առաջիկա տարիների ընթացքում:

### ***1. Ինչ պետք է իմանա և կարողանա ավագ դպրոցի տնօրենն այսօր.***

Լավագույն արդյունքների հասնելու համար համար ավագ դպրոցի տնօրենը պետք է գտնի հետևյալ հիմնական հարցերի պատասխանները, հարկավոր է համախմբվել բարեփոխման գաղափարները կյանքի կոչելու գործում: Ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելու համար տնօրենը իր առջև պետք է կարողանա դնել հստակ խնդիրներ.

1. աշակերտների ուսումնական հաջողությունների ապահովումը.

2. չափորոշիչների վրա հիմնված ուսուցման ապահովումը:

Այս պլանավորումը իրականացնելու համար դպրոցի տնօրենը պետք է համագործակցի դպրոցի ուսուցիչների հետ: Տնօրենը պետք է կարողանա պլանավորել ուսուցիչների մասնագիտական զարգացում՝

- նախաձեռնելով և իրականացնելով փոփոխությունները,
- իրականացնելով մասնագիտական վերապատրաստումներ,
- օժանդակելով նորարարություններին,
- օժանդակելով տեխնիկական միջոցների կիրառմանը,
- դասասենյակները հագեցնել համակարգիչներով,



- հագեցնել կաբինետները էլեկտրոնային գրատախտակներով,
- ունենալ հարուստ գրադարան,
- լաբորատորիաները հագեցնել սարքավորումներով,
- ունենալ բարենորոգված բակ,
- մարզասրահը հագեցնել սպորտային գույքով,
- ունենալ հանդիսությունների սրահ,
- Ճաշարան:

Համակարգչային ծառայության ծրագրերի իրականացումը նպաստում է աշակերտների ընդհանուր զարգացմանը, գիտելիքների ձեռքբերմանը, ինտերնետը ծառայում է ` որպես հաղորդակցման միջոց:

Վերապատրաստման ծրագրերի մասնկացությամբ ձեռք ենք բերել հմտություններ, որոնց շնորհիվ մասնակցել ենք <<Այրեքս>>, <<Փրոջեքթ Հարմոնի>>, <<Քայլ առ քայլ>>, <<Մակ>>, <<Այրըն>> իրավունք>>, <<Արևածաղիկ>>, <<Ծիգ>>, <<Դիվանագիտական դոներ>>, <<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն>>, <<Ազգային փոխանակման էջերի ստեղծում>> ծրագրերին:

Ունենալով հարուստ նյութատեխնիկական բազա` մենք կարող ենք համարել, որ աշխատանքներում հասել ենք լավ արդյունքների:

## ***2. Կրթական ինչ արդյունքների կարող ենք հասնել.***

- Մենք պետք է վերանայենք մեթոդական շատ ձեռնարկներ, որոնք փորձում են թելադրել այն մեթոդները, որ պետք է իրականացնեն ուսուցիչները` այս կամ այն բաժինը ուսումնասիրելիս:
- Բնականոն կեպով պետք է բարձրացնենք ուսուցչի պատասխանատվությունն իր աշխատանքի արդյունքի և որակի համար:

- Մանկավարժական կադրերի վերապատրաստման, աստեսավորման և նրա անցկացման կարգի մեջ պետք է մտցվեն փոփոխություններ: Աշխատանքում պետք է խրախուսել ուսուցիչներին:
- Կարողանալ ձևավորել և զարգացնել աշակերտների կարողությունները և հմտությունները՝ ստացած գիտելիքները կյանքում կիրառելու.
- Կարողանալ հասնել այնպիսի արդյունքների, որպեսզի սովորողը ձգտի ստանալ բարձրագույն կրթություն:

### **3. Զարգացման ինչ հեռանկար պետք է նախատեսի դպրոցը.**

Կրթության որակը հանդիսանում է ապագայի նկատմամբ տվյալ պետության վերաբերմունքի արտահայտիչը: Լույսը տարածելու համար ճանապարհ կա: Կամ մոմը, կամ հայելին, որն արտացոլում է լույսը: Կրթության որակի խնդիրը ռազմավարական և պրակտիկ նշանակության կենսական պրոբլեմ է, որից էլ բխում են կրթական հաստատությունների կատարելագործման պահանջները: Դպրոցն ապրում է մի տեղեկատվության ժամանակաշրջանում, ուր հաստատության ինֆորմացիայի ծավալը յուրաքանչյուր 3-5 տարվա ընթացքում կրկնապատկվում է: Դպրոցի զարգացման ծրագիր կազմելիս մենք առաջնորդվում ենք այն խնդիրներով, թե ինչպիսի բարեփոխումներ ենք ցանկանում իրականացնել:

- Ձևավորենք վերլուծական մտածողություն ունեցող մարդկանց՝ ֆիզիկապես առողջ և կոփված:
- Ով է կառուցում ապագայի այդպիսի պատկերը:

Կրթության ապագային միտված պահանջները կանխորոշում է հասարակությունը: Անհրաժեշտ է դպրոցում ներդնել տեխնոլոգիաներ, որոնք կտանեն անհատի կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը:


Դպրոցը նախատեսում է՝

- Ապահովել որակյալ կրթություն, որը հանդիսանում է մասնագիտական կրթության նախաշեմը.
- Կրթությունը դարձնել արդիական, համապատասխանեցնել զարգացման պետական և միջազգային միտումներին.
- Բարձրացնել ավագ դպրոցում դասավանդող ուսուցիչների մասնագիտական որակավորումը, ստեղծել համատեղ աշխատող մանկավարժների խումբ, որոնք ունեն ընդհանուր նպատակներ:
- Կազմել ներդպրոցական վերահսկողություն, ժամանակացույց.
- Օրվա աշխատանքային պլան.
- Ուսուցչի օրվա դասալսումներ.
- Ուսուցչի թեմատիկ պլաններ.
- Տնօրենի, փոխտնօրենների ամսեկան և տարեկան աշխատանքային պլաններ:
- Ուսուցիչների մ/մ նախագահների աշխատանքային պլաններ.ստեղծել փաթեթներ՝ ըստ մասնախմբերի
- Մանկավարժական խորհրդի պլան քննարկել՝ ըստ գործող հոսքերի:

Ճիշտ պլանավորումը և զարգացման պլանային ծրագրով ղեկավարումը աշխատանքների հաջող կազմակերպման կարևոր նախապայմանն է: Պլանավորումը բարդ արվեստ է, որին պետք է տիրապետել և ժամանակի պահանջներին համապատասխան կատարելագործել:

Ապահովել հատուկ կրթական չափորոշչի մշակում՝ հնարավորություն ընձեռելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքների իրականացումը հանրակրթական դպրոցում՝ ներառական կրթության կարգով.

## Հաստատության կառավարման կառուցվածքը և համակարգը



Հաստատության զարգացման կազմակերպչական գործառույթները  
/2011-2016/

**1. Նախապատրաստել ուսուցիչներին ավագ դպրոցում աշխատելու .**

- ընդգրկել ուսուցիչներին որակավորման բարձրացման դասընթացներում՝ ըստ առարկաների:

Ոչ մի հանրակրթական ծրագիր, որքան էլ այն գիտականորեն ճիշտ մշակված լինի առանց որակյալ կադրերի, որոնք պարբերաբար ենթակա են վերապատրաստման և ատեստավորման , հնարավոր չէ իրականացնել: Ատեստացիան դպրոց կրերի նոր կադրեր, ըստ որակավորման աստճանի, կազատի դպրոցը անորակ կադրերից: Այն կնպաստի դպրոցների կադրային խնդրի լուծմանը: Բոլոր ուսուցիչները նախքան ատեստավորում անցնելը ենթակա են պարտադիր վերապատրաստման՝ ըստ սահմանված չափորոշիչների:

**2. Դասարանների կոմպլեկտավորում.**

Դասարանների կոմպլեկտավորումը ավագ դպրոցում ունի որոշակի առանձնահատկություններ դասարանները կոմպլեկտավորման ըստ ենթահոսքերի.

- Ֆիզիկամաթեմատիկական /կենսաֆիզիկա, տնտեսագիտություն/
- Հումանիտար /լեզվագիտական, իրավագիտական/:

Վերանայել ռուսերենով ուսուցմամբ հիմնական դպրոցի կոմպլեկտավորումը, այդ թվում՝ տեղափոխության հարցը:

Մասնախմբերում քննարկել և մ/խ նիստում հաստատել ուսպլան՝ ըստ գործող հոսքերի: Ուսպլանը կազմվում է օրինակելի ուսումնական պլանի հիման վրա, մշակվում է յուրաքանչյուր հոսքի տվյալ ուստարվա ենթահոսքերի ուսումնական պլանները, իսկ դպրոցի տարեկան պլանը

պետք է նկարագրի դպրոցի բոլոր օղակների անելիքը ամբողջ ուստարվա ընթացքում: Յուրաքանչյուր ստորաբաժանում, օգտվելով դպրոցի տարեկան պլանից, կկազմի իր աշխատանքների տարեկան պլանը, որոնց մեջ արտացոլված են հետևյալ բաժինները.

- Ներդպրոցական վերահսկողություն.
- Միջոցառումների, ծրագրեր կատարում.
- Մանկավարժական խորհրդի, մեթոդափոխման նիստերի, տնօրենի կից խորհրդակցությունների կազմակերպման ժամանակացույց և օրակարգ:

3. Մշակութային- կազմակերպչական.

- Ձևավորել սկումբ՝ <<Խոսենք նաև ֆրանսերեն>>:
- Նպաստել աշակերտների մշակութային կյանքի ակտիվացմանը մշակութային այցեր, գրական-երաժշտական ցերեկույթների, ներդպրոցական միջոցառումների կազմակերպում:
- Համալրել դպրոցի երգչախմբի կազմը ավագ դպրոցի աշակերտներով:
- Ստեղծել պարի խումբ, սպորտային խմբակներ, ձևավորել առողջ ապրելակերպի սկումբ, նպաստել առկա խմբակների գործունեության արդյունավետության բարձրացմանը:
- Ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացման նպատակով այցեր կազմակերպել զորամասեր: Ստեղծել <<Փառքի սրահ>>:

## 1. Պլանավորել ենք.

- վերանորոգել 1-ին մասնաշենքը.
- ստեղծել ընթերցասրահ.
- համակարգչային դասասենյակները հազեցնել համակարգիչներով.
- շարունակել համագործակցությունը միջազգային կրթության զարգացման ծրագրերի հետ.
- ստեղծել բնագիտամաթեմատիկական լաբորատորիաներ և հազեցնել նյութատեխնիկական բազայով.
- <<Իմ մասին>> ծրագրի շրջանակներում ստեղծել Media կենտրոն.
- կարևորել 3-րդ օտար լեզվի /ֆրանսերենի/ ուսումնասիրությունը ավագ դպրոցում.
- աջակցել աշակերտական խորհրդի աշխատանքներին.
- համագործակցել դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողների հետ.
- <<Հույսի կամուրջ>> ՀԿ –ի հետ համատեղ ստեղծել գիրք՝ <<Ամեն ինչ լավ է լինելու>> խորագրով և տեղադրել կայքում:

Ծրագիրը նկարագրում է առանձին գործող ավագ դպրոցի համակարգը և դրան անցման ռազմավարությունը: Այն նպատակաուղղված է լուծում տալու ավագ դպրոցի առջև ծառայած խնդիրներին:



աստատության կառավարման կարծիքը և համակարգը

